

40) Մատենադարան «Անահիտ»—Ք 1. Անարոյ Յրան. Եպիկուրի պարտեզը (հատուածներ), թարգմանեց Ա. Զ. Քարիզ, 1901 թ. Գինը 1 ֆրանկ:

Պարիզում հրատարակուող «Անահիտ» ամսեայ հանդէսը իր բաժանորդներին նրանց, որոնք երրորդ տարուան բաժանորդագինը վճարած են, ձրիաբար ուղարկում է յիշած գիրքը, ինչպէս և Ալֆրէդ Դը Վինէի «Քերթուածները», որ շուտով լոյս կը տեսնի: Անկասկած, կարելի է ողջունել՝ ֆրանսիական գրականութիւնից ընտիր երկասիրութիւնների հայերէն թարգմանութեան միտքը, սակայն, մեզ թւում է, որ այդ սերիաներին պէտք էր կցել, իբրև առաջաբան, մի տեսութիւն ֆրանսիական արդի գրական հոսանքների մասին. այն ժամանակ աւելի կըրթիչ ազդեցութիւն կ'ունենային այդ հրատարակութիւնները և իրարից անջատ, անկապ, պատահական հատուածների ընտուրութիւն չէին կրի:

Անատոյ Յրանսի «Եպիկուրի պարտեզ»ի մէջ հատուածները այնպիսի տպաւորութիւն են թողնում, որ կարծես դուք յանկարծ մտել էք ֆրանսիական մի բարձր սալօն, ուր խօսում են զանազան փիլիսոփայական, հասարակական և գիտական հարցերի մասին սալօնական նրբաճաշակութեամբ և թեթեւութեամբ. դուք չը գիտէք խօսակցութեան սկիզբը, շատ բան միայն հարեանցի ակնարկով է շօշափուած. զգում էք որ խօսողը աշխատում է որքան կարելի է գեղեցիկ ձևերի մէջ ամփոփել իր թըռուցիկ մտքերը... Այդ սալօնական խօսակցութիւններից հագիւթ է շատ բան ուսանի հայ ընթերցողը. նրան հարկաւոր են այժմ ոչ գրական քաղցրեղէններ, չ բիսկվիտներ, այլ աւելի սննդաբար և պարզ մտաւոր կերակուր: Յրանսիական գրականութեան մէջ պէտք է ընտրել և թարգմանել աւելի հիմնական, տևողական գին ունեցող երկեր:

Գալով թարգմանական լեզուին, պէտք է խոստովանել որ նա գողտրիկ է և կարողացել է արեմտեան հայերէնով արտայայտել հեղինակի նուրբ, թեթև և գեղեցիկ ոճը:

Լ. Ս.

41) Н. В. КРЕНИЦЫНЪ, „Восточный вопросъ на почвѣ его исторіи и политикѣ“, С. Петербургъ, 1900, 118 стр. цѣна 1 руб.—Ն. Վ. Կրենիցին. «Սրբեկեան հարցը իր պատմութեան և քաղաքականութեան տեսակետից», Պետերբուրգ, 1900 թ. 118 էր. գինը 1 ռ.:

Մարդկային կեանքը գոյութեան կոտուի մի անվերջ շղթայ

է. Ազգեր և ժողովուրդներ անդադար մըցում են միմեանց հետ, անողորմ կոխ են մղում բնութեան դէմ, որպէս զի բարեզքն իրանց վիճակը, հասնեն տենչալի ապագային: Նրանցից իւրաքանչիւրը մի որոշ դեր է խաղում այդ կուռում, մի որոշ հետք է թողնում համաշխարհային կեանքում: Դժբախտաբար կան ազգեր, որոնք այլ և այլ հանգամանքների ազդեցութեան տակ իրանց ստոր բնազդը, աւերիչ հակումները ծայրայեղութեան հասցնելով, կատարեալ պատուհաս են դառնում հարևանների համար, միմիայն չարիք են պատճառում համայն մարդկութեանը:

Ահա այդպիսի ազգերի թուին են պատկանում թիւրքերը, որոնց ամբողջ պատմութիւնը ընթացել է հրի և սրի ու արեան գետերի միջով:

Թիւրքիայի ամբողջ անցեալը մեզ բերում է այն եղբակալութեան, որ նա սկզբից մինչև վերջը եղել է մի պատերազմական բանակ \*), որ հրով և սրով հիմնել է իր գոյութիւնը, հրով և սրով հասել հզօրութեան և նոյն միջոցով ենթարկուել քաջքայման: Բնականից աւարառու և աւաղակաբարոյ թիւրքերը, իսլամն ընդունելով, աւելի կոպտացան, ազատութիւն տուին իրանց գազանային հակումներին, անզուսպ կրքերին:

— Թիւրքերը, ասում է անմահ Գլադստօն \*\*), նման չեն ոչ Հնդկաստանի հեզ մահմեդականներին, ոչ Սիրիայի ասպետ-սալադիներին և ոչ էլ Սպանիայի քաղաքակիրթ մաւրերին: Եւրոպա ոտք դնելու օրից նրանք ներկայացնում են մի անարկուտիպ, որ բացասում է այն ամենը, ինչ որ մարդկային է: Նըրանք ուր որ մտել են, այնտեղ թողել են արիւնշաղախ լայն հետքեր, ուր որ հաստատել են իրանց տիրապետութիւնը, այնտեղ անհետացրել են քաղաքակրթութիւնը: Նրանց կառավարութիւնը միշտ հիմնուած է եղել ոչ թէ օրէնքի, այլ բռնակալութեան վրայ... Այո, թիւրքիան եղել է զինուորական հզօր ոյժ, որից մի ժամանակ վտանգի է ենթարկուել ամբողջ Եւրոպան»...

Սակայն այդ հզօրութիւնը հէնց սկզբից եղել է արտաքին, անհիմն և միայն մի շարք բարեբաստիկ հանգամանքներից առաջացած:

Իբրև ապացոյց բաւական է մի թեթև ակնարկ ձգել դէպի անցեալը, բաւական է պատկերացնել թիւրքիայի նուաճած ազգերի սօցիալական և քաղաքական կազմն ու ոյժը: XII—XIII

\*) Ferrero Il Militarismo, Milano 1898.

\*\*\*) „Волгар. ужасы и восточн. вопр.“ В. Гладстона — стр. 9—10.

դարաշրջանում թէ Փոքր-Ասիան, թէ Բալկանեան թերակղզին արդէն քայքայուած մահամերձ դրութեան մէջ էին և ընականաբար հէնց առաջին հարուածից պիտի խոնարհուէին թշնամու առաջ, պիտի ընդունէին իսլամի լուծը: Ուրևմն զարմանալու ոչինչ չը կայ որ Թիւրքեան այդպիսի հեշտութեամբ ու արագութեամբ տիրեց այդ երկիրներին:

Կրկնում ենք, այդտեղ մեծ դեր կատարողը բարեյաջող հանգամանքներն էին և ոչ իսլական ոյժը: Ի հարկէ հնարագէտ խելքը, նպատակայարմար միջոցներից օգտուելով, կարող էր արտաքին հզօրութիւնը դարձնել և ներքին—հիմնաւոր, բայց Ալլահն այլ կերպ էր անօրինել...

Տիրապետելով լայնածաւալ և բերրի երկիրներ, նուաճելով բազմացեղ ու բազմադասն ազգերի, Օսմանեան պետութիւնը չախտացեց կուլտուրական միջոցներով կարգաւորել իր գործերը՝ հաղորդակցութեան ճանապարհներ շինել, գործարաններ հիմնել, երկրի բերքերը շահագործել, հպատակների վիճակը բարելոքել, ուսում և կրթութիւն տարածել \*): Նա ընդհակառակը իրան զէնք ընտրեց կոպիտ ոյժն ու բռնակալութիւնը: Թիւրքերու, իբրև պատերազմող—տիրող տարր, ապրել են մեծ մասամբ «բայաների» հաշուով, շարունակ անձնատուր են եղել ծուլութեան, յետամնացութեան: Քրիստոնեայ հպատակներն են եղել երկիր մշակողը, արդիւնագործութեան ու վաճառականութեան զարգացնողը, պետութեան տնտեսական հիւքը պահպանողը: Անվերջ մրցման, անընդհատ տոկունութեան շնորհիւ դրանք ընականաբար եղել են կուլտուրապէս աւելի բարձր քան մահմեդականները: Սակայն օրէցօր աճող բռնակալութիւնը, կառավարիչ դասակարգի կամայականութիւնը, երկրի սիստեմատիքաբար անբերրիանալը և ընդհանրապէս կեանքի ու գոյքի կատարեալ անապահովութիւնը քրիստոնեայ ազգաբնակչութեան թշուառութիւնը հասցրել են գազաթնակէտին և տեղի տուել մի շարք ապօտամբութիւնների. իսկ այդ իրողութիւնը մեծ պետութիւնների այլ և այլ միտումների հետ միացած առաջացրել է «Արևելեան հարցը»—այդ անլուծելի «Գորդեան հանգուցը»:

Վերոյիշեալ գրքի հեղինակը—պ. Կրկնիցին արևելեան հարցի սկիզբը համարում է 1453 թ. մայիսի 29-ը, այսինքն

\*) ձիշտ է, այժմ Թիւրքիայում կան մի քանի բարձրագոյն, 140 միջնակարգ (որոնցից 12 գիմնադիւս—Սուլթանիէ միկթէրի և 118 բէալ-դպր.—միկթէրի բուժդիէ) և բազմաթիւ տարրական դպրոցներ (իբրիթայէ միկթէրի), բայց դրանք ողորմելի պատկեր են ներկայացնում իրանց անանգած առարկաների և դասատուութեան ձևով: Ամեն տեղ թաղաւորում է Ղուրանի ոգին:

այն օրը, երբ թիւրքերը Կ. Պօլսի տէրը դարձան: Նրա կարծիքով այդ հարցի հիւժը կրօնական տարբերութիւնն էր: Ռուսները յոյների հաւատակիցն էին, ուստի և պիտի պաշտպանէին նրանց չահերը: Բացի դրանից 1472 թ. Մեծ Իշխան Իօհանն III-ը ամուսնացաւ յունաց թագաւորազն Սօֆիայի հետ և այդ օրուածնից ուսաց վեհապետները թիւրքահպատակ քրիստոնէակաների հովանաւորը դարձան և սկսեցին միջամտել թիւրքիայի գործերին:

Պ. Կրենիցին մանրամասն կերպով նկարագրում է Ռուսաստանի կատարած դերը արեւելեան հարցում, նրա քաղաքական յարաբերութիւնները թիւրքիայի հետ և մղած պատերազմներն ու ձեռք բերած հետևանքները:

Դժբախտաբար նա այդ հարցերն այն աստիճան միակողմանի է շօշափում, որ ընթերցողն ահամայցից գալիս է այն եզրակացութեան, թէ արեւելեան հարցը գոյութիւն ունի՝ միայն Ռուսաստանի և թիւրքիայի համար, թէ միւս մեծ պետութիւնները չէզոք կամ երկրորդական դեր են խաղացել, թէ ապագայում էլ միայն Ռուսաստանը պիտի լուծէ այդ հարցը:

Սակայն հեղինակի թէ գլխաւոր հայեցակէտը և թէ եզրակացութիւնները միանգամայն սխալ են: Ահա թէ ինչու. արեւելեան հարցի գլխաւոր հիւժը ոչ թէ կրօնական կամ ազգային տարբերութիւնն է, այլ տնտեսական-սոցիալական գործօնները, ինչպէս արդէն նկատեցինք վերևում: Եթէ թիւրքիան լինէր քաղաքակիրթ պետութիւն, եթէ նրա հպատակներն ունենային կեանքի և դոյքի ապահովութիւն, եթէ նրանք ազատ լինէին գաղանային հալածանքներից ու բռնութիւններից, այն ժամանակ կրօնական գործօնը ոչ մի դեր չէր կարող կատարել և արեւելեան հարցն էլ գոյութիւն չէր ստանայ:

Ինչ վերաբերում է հեղինակի եզրակացութիւններին, կարելի է միայն այսքանը նկատել. ճիշտ է, Ռուսաստանն է եղել արեւելեան հարցում գլխաւոր դեր խաղացողը, ճիշտ է, նրա զինուորների արիւնն է ներկել թիւրքիայի դաշտ ու լեռները, նրա միջամտութիւնն է նպաստել յոյների, սերբերի, սև լեռնացիների ու բոլղարների ազատութիւն ձեռք բերելուն, բայց երբեք չը պէտք է մոռանալ որ այդտեղ նշանաւոր դեր են խաղացել նաև Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան, ուստի դրանց մասին էլ խօսելն անհրաժեշտ էր:

Բացի դրանից արեւելեան հարցը լուսաբանելու համար հարկաւոր է քննել թիւրքիայի ներքին-սոցիալական կեանքը, նրա հպատակ ազգերի կարիքներն ու պահանջները, որ միանգամայն բաց է թողնուած պ. Կրենիցինի գրքում:

Առանց դրան միանգամայն աննպատակայարմար է վճիռներ տալը, առաջարկութիւններ անելը, որովհետև դրանք միշտ էլ կարող են սխալմանքներ ու թիւրիմացութիւններ առաջացնել և մնալ միայն «ձայն բարբառոյ յանապատի»:

Եւ իսկապէս մինչև օրս այդպիսի քանի առաջարկութիւններ են եղել. Բ. Դուռը քանիքանի խոստումներ է տուել Եւրոպային. սուլթանները որքան գեղեցիկ բարենորոգումներ են հրատարակել... Իրագործուել են, երկրի դրութիւնը փոխուել է արդեօք... Ոչ: Ընդհակառակը Թիւրքիայի կազմը հետզհետէ աւելի ու աւելի է քայքայուել, թիւրքահպատակների վիճակը աւելի է վատթարացել: Միայն քսան տարուայ ընթացքում (1854—75) նա քսան անգամ արտաքին փոխառութիւն է արել \*), 1875 թ. նրա պարտքն էր 995,000,000 ո., 1897 թ.— 1,064,372,370 ո. իսկ անցեալ 1900 թ.— 4,100,000,000 ֆրանկ: Այդպէս ուրեմն Թիւրքիայի պարտքերը տարէց տարի աւելացել են:

Հապա ուր են գնում մեծաքանակ հարկերը, ինչ են լինում լայնատարած երկրի բերքերը: Ահա թէ ուր.— Սուլթանը, որ սուրենիքում խիստ հսկողութեամբ պահպանելով Սանջաղիչերիֆը (նուիրական դրօշակ, որով Մահմէդն առաջնորդեց ամբոխին դէպի Մեկկա), Օմարի յալթական դրօշակը և Խրխայի շերիֆը (Մահմէդի վերարկուն), իրան համարում է Մահմէդի յաջորդ—խալամի խալիֆ: Իբրև մի բազմամիլիոն համայնքի կրօնական աշխարհական պետ, նա ապրում է իր կոչմանը վայել շուքով և շտայութեամբ: Նա տարեկան մօտ 50,000,000 ո. ծախսում է միայն իր հարէմում, ուր ապրում են 1,500 հոգի (Սուլթանի կանանց թիւը հասնում է 300-ի) \*\*):

Իրա վրայ աւելացրէք լրտեսների (տարեկան 30,000,000 ո.) զօրքի \*\*\*) վրայ ծախսածը, փաշաների և միւս պաշտօնեաների կատարած բազմազան տեղի և անտեղի ծախսերը, ի նկատի ունեցէք հարկահանութեան կամայական ձևը և այն ժամանակ հասկանալի կը լինի Թիւրքիայի սնանկութեան պատճառները:

Նա XVII դարից մտել է անգորութեան շրջանը: Նրա ներքին և արտաքին քայքայումը դեռ չարունակուում է: Իբրև

\*) Юрій Казі Бекъ: „Современная Турція“.

\*\*) R. Stein: „Abdul Hamid, seine Familie, sein Hofstaat“. 1901.

\*\*\*) Թիւրքիայի զօրքի թիւը խաղաղ ժամանակ հասար է 182,000-ի —1,183 թնդանօթով, իսկ պատերազմի ժամանակ 610,000—1,512 թնդանօթով:

ապացոյց բաւական է յիշել Թիւրքահայաստանի և Մակեդոնիայի արիւնահեղ դէպքերը, Արաբիայի մերթ ընդ մերթ կըրկընուող ապստամբութիւնները, «երիտասարդ Թիւրքերի» խլըրտումը, Իզուր է վրդովուում իսլամի խալիֆը, ապարդիւն է Թիւրք հայրենասէրների ջանքն ու ճիգը: Գործերի բնական ընթացքը, Ղուրանի աւերիչ ոգին հէնց սկզբից Թիւրքիային դէպի կորուստ—քայքայում էին տանում և այժմ արդէն ուշ է այդ պատմական հոսանքի առաջն առնելը:

Եթէ Թերթենք պատմութեան էջերը, կը նկատենք որ երբ բազմանում են մի որ և է զինուորական պետութեան կործանման յատկանիչները, այն ժամանակ իշխող-տիրապետող դասակարգն աւելայնում է բռնութիւններն ու խտութիւնները. բայց այդ խառնուսիկ միջոցը միշտ էլ ապարդիւն է մնացել և ընդհակառակը արագայրել է կործանման պրօյէտսը: Այժմ նոյն երևոյթը նկատուում է Թիւրքիայում:

«Հիւանդ մարդը» որքան սաստկայնում է իր անգթութիւնները, որքան յաճախ է կրկնել տալիս կոտորածները, այնքան շատ խառնակութիւններ ու գժտութիւններ է առաջացնում և զբանով իր վիճակը վատթարացնում: Համեմատուցէք այժմեան և նախկին Թիւրքիան: Ո՛րքան փոքրացել են նրա սահմանները: Նրանից բաժանուել են՝ Վենզրիան, Տրանսիլվանիան, Կրօացիան, Բեսարաբիան, Յունաստանը, Սերբիան, Ղարաղաղը, Բուսնիան, Բուլղարիան, Ալժիրը, Թունիսը, Կիպրոսը: Լիբանանը և Կրէտէն ինքնավարութիւն են ստացել:

Այն Թիւրքիան, որ մի ժամանակ սարսափի մէջ էր պահում ամբողջ Եւրոպան, այսօր ստիպուած է ամեն մի քայլափոխում մեծ պետութիւնների հրահանգով շարժուել, նրանց անհամաձայնութիւնից օգտնուել, հարցեր ձգձգելով, խոստումները չիրագործելով: Կարող է արդեօք այդպիսի արհեստական գոյութիւնը երկար տևել...

Այդ հարցին պատասխանել—կը նշանակէ տալ ամբողջ «Արևելեան հարցի» լուծումը, որովհետև զբանից է կախուած Թիւրքիայի «լինել-չլը լինելու» խնդիրը:

Ինչպէս յայտնի է, մինչև օրս շատ է զրուել ու խօսուել այդ չարագրաստիկ հարցի մասին, շատ հեղինակաւոր մարդիկ (օրինակ Գլադստօն, պրօֆ. Կոմարովսկի, անտեսագէտ Էմիլ-դը-Լաւելէ, Սօլովեօվ և այլն)—յայտնել են իրանց կարծիքը: Այժմ զբանց վրայ աւելանում է մի նոր կարծիք—պ. Կրենիցիևի կարծիքը:

Վերջինս պատկանում է ուսուսց բարձր զինուորական շրջանին, ուստի և նրա կարծիքը մի առանձին հետաքրքրութիւն

է ներկայացնում: Նա իր գրքի վերջում քննադատում է Ռուսաստանի քաղաքականութիւնը արևելեան հարցում և գալիս է այն եզրակացութեան, որ այդ քաղաքականութիւնը սխալ ուղղութիւն է ունեցել, ուստի և հանդիպել է արգելքների Եւրոպայի կողմից: Ռուսաց գործիչները միշտ աշխատել են մեծ-մեծ ծրագիրներ կազմել (օր. Պատեօմկինի, գրաֆ Կապօղիստրիայի, Զուբովի ծրագիրները): Իսկ այդ հանգամանքը երկիւղ է ազդել Եւրոպայի վրայ: Եւրոպական պետութիւնները ամեն կերպ աշխատել են զսպել Ռուսաստանի աշխարհակալական ձգտումները և դրանով դանդաղեցրել են արևելեան հարցի լուծումը:

Նրա կարծիքով արևելեան հարցը վերջնականապէս լուծելու համար հարկաւոր է Բալկանեան պետութիւններից կազմել մի դաշնակցութիւն և Պօլիսը դարձնել այդ դաշնակցութեան մայրաքաղաքը:

Զրանցքների վերահսկողութիւնը պէտք է յանձնել Ռուսաստանին և Բալկանեան դաշնակցութեան: Իսկ թէ ինչ է լինելու թիւրքահպատակների վիճակը—այդ մասին հեղինակը ոչինչ չի ասում: միայն հայերի մասին նկատում է, թէ նրանց պէտք է վերջնել Ռուսաստանի հովանաւորութեան տակ: Բոլորից վերջը Կրօսլայինը եզրակացնում է, թէ Ռուսաստանի շահերի տեսակէտից անհրաժեշտ է Ղարսը երկաթուղու ցանցերով միացնել կենտրոնական Ռուսաստանի հետ և ուժեղացնել Սև ծովի նաւատորմը, որովհետև միայն արիւնահեղ պատերազմը կարող է վերջնականապէս լուծել արևելեան հարցը...

Ե. Թ.

42) Dr. Ernst Friedrich: „Handels und Produktenkarte von Kleinasien“. Halle, verlag G. Sternkopf.—Դր երեսո Ծրիդրիս. „Փոքր-Ասիայի առևտրական և արդիւնաբերական քարտէզը“ Հալլէ հրատ. Վ. Շտերնկօպֆի:

Եւրոպական կապիտալիզմը, շարունակ աճելով, միշտ կարիք է զգում նոր վաճառանոցների: Սակայն առանց հիմնական ուսումնասիրութեան չափազանց դժուար է մի որ և է երկրի հետ առևտրական յարաբերութիւն ունենալ, դժուար է համապատասխան չափով մթերքներ արտահանել ու ներմուծել:

Ահա հէնց այդ տեսակէտից շատ մեծ արժէք ունեն առևտրական արդիւնաբերական քարտէզներն առհասարակ:

Ինչպէս յայտնի է, վերջին տարիներում Փոքր-Ասիան Եւրոպայի յատուկ ուշադրութեան առարկան է դարձել: Պետու-